

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Եկեղեցին Հայկական ծննդավայրն է հոգւոյս՝
 Ինչպէս քառայր մ'ընդարձակ, պարզ ու խորունկ, մութ ու լոյս...
 Իր գաւթով հիւրընկալ, իր լայն բեմով ու հեռուն
 Կանգնած իր լուռ խորանով՝ որ կարծես նա՛ւ մ'է ծրփում...

Եկեղեցին Հայկական-ես աչքս գոց կը տեսնեմ
 Ու կը շնչեմ, կը լրսեմ՝ իր Յիսուսով մանկադէմ,
 Իր սեղանէն մրխացող գուլայ-գուլայ խունկերով
 Եւ իր պատերը ցնցող աղօթքներով ակնխոյ՜...

Եկեղեցին Հայկական բարձր բերդն է հաւաստին
 Իմ պապերուս՝ որ հողէն զայն քառ առ քառ հանեցին
 Եւ երկինքէն իջուցին զայն ցող առ ցող, ամպ առ ամպ
 Ու թաղուեցան անոր մէջ հանդարտութեամբ, հեղութեամբ...

Եկեղեցին Հայկական մեծ վարագոյր մ'է բանուած՝
 Որուն ետեւ, սրկիհին մէջ կ'իջնէ ինքը Աստուած,
 Որուն առջեւ՝ զխահակ կուգայ իմ ազգըս ամբողջ
 Հաղորդելի Անցեալին հաց ու գինով կենսառողջ...

Եկեղեցին Հայկական՝ ծովուն դիմաց ակեկոծ
 Նաւահանգիս մ'է խաղաղ. ցուրտ գիւերին՝ հո՛ւր եւ բոց,
 Ու օթակէզ ցերեկին անձա՛ն մըն է ստուերոս՝
 Ուր շուշաններ կը ծաղկին Շարականի գետին մօտ...

Եկեղեցին Հայկական մէն մի քառին ճակ գետնի
 Դէպի երկինք բարձրացող գաղտնի համբայ մը ունի...
 Եկեղեցին Հայկական Հայ Հոգիին եւ Մարմնոյն
 Զբրահանդերձն է փայլուն՝ մինչ իր խաչերն են դաւոյն

Եւ զանգակներն են բոմբին, եւ երգն է մի՛շտ Յաղթութիւն...:

Վ.Ս.ՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

